

րական իշխանութիւնն անցաւ Կարլոտտայի (1458—1460), որ երկրորդ ամուսնութիւնով մը միացաւ Սալոնիայի Լուզովիկոս Բ գրսին հետ. բայց քիչ ժամանակէն իր անհարազատ եղբայրն Եգիպտոսի սուլտանին օգնութեամբ գրաւելով գահը (1460—1473), Կարլոտտա ստիպուեցաւ Հոսմ ապաստանիլ, ուր եւ մեռաւ անզաւակ, եւ մարմինն ամփոփուեցաւ Ս. Պետրոսի գեանաղամբաններուն մէջ (16 յուլիս 1487) :

Յակոբ Բ 1472-ին ամուսնացաւ Վենետիկի դոմերէն Մարկոս Կորնարոյի թոռնորդի Մարկոս ասպետի աղջկան՝ Կատարինէի հետ : Ասիկա Վենետիկի իշխանութեան կողմէ ծուղակ մըն էր որ կը լարուէր Կիպրոսի թագաւորութեան գէմ : Եւ երբ Յակոբ զիպուածով (?) մեռաւ, իշխանութիւնը ժառանգեցին Կատարինէ Կորնարոս եւ Յակոբ Գ (1473), որով յղի էր Կատարինէ : Այս միջոցին Կիպրոսի մէջ ապստամբութիւն մը ծագեցաւ, որուն հետեւանքն այն եղաւ, որ Վենետիկի իշխանութիւնը՝ թէ՛ այրի թագուհին եւ թէ՛ նորածին թագաւորն իբրեւ վենետիկեցի պաշտպանելու պատրուակով՝ իր « հովանաւորութիւնը » (!) տարածեց Կիպրոսի թագաւորութեան վրայ. եւ, որպէս զի յաջողութիւնը կատարեալ ըլլայ, հազիւ մէկ տարեկան մանուկ թագաւորն ալ թունաւորելով՝ Կորնարոսն իր ձեռքին մէջ առաւ :

Յակոբ Գ-է ետք Կորնարոս վենետիկեցիներու օգնութեամբ գահը բարձրանալով (1474) իր առաջին գործն եղաւ, իբր երախտագիտութիւն, տպել տուած գրամին վրայ նշանակել իր վենետիկեան ծագումը — « +KATERINA : VENETA : REGIAN | IERUSALEM · CIPRI · ET · ARMI · AE » . այսինքն՝ « + Կատարինէ վենետացի, թագուհի | Երուսաղէմի, Կիպրոսի եւ Հայաստանի » : Բայց, ինչպէս ըսի, ասիկա Վենետիկի Մերակոյաին կողմէ լարուած ծուղակ մըն էր, որ իր արգիւնքը տուաւ քիչ ժամանակէն. եւ Կորնարոս՝ Մերակոյաի ստիպումին վրայ՝ հրաժարելով գահէն (26 փետրվ. 1489) Վենետիկ առաջնորդուեցաւ, ուր իշխանութիւնը մեծամեծ պատիւներ ընծայեց անոր, գէթ սիրտն աննելու համար :

Կորնարոյի մահով (10 յուլիս 1510) վերջ գտաւ Կիպրոսի Լուսինեանց իշխանութիւնը, որուն հետ բոլորովին վերցաւ նաեւ Հայաստանի անուանական թագաւորութիւնը :

Այսօր ո՛ր ճամբորդն որ Վենետիկ երթայ, կարելի չէ առանց Ման-Սալաւտորէ կամ Ս. Փրկչի եկեղեցիին այցելութիւն տալու ետ դառնայ : Հոն, այդ անշուք եկեղեցիին սալայտակներէն մէկին տակ կը հանդչին Հայոց վերջին թագուհիին՝ Կատարինէ Կորնարոյի աճիւնները : « Տապանը բարայտատիկ մաս կը կազմէ. վրայէն կոխկրտելով կ'անցնուի դռնէ մը որ եկեղեցւոյ քովնաւի փողոցներէն մին կը հանէ, » ինչպէս կը գրէ ինձ Վեր-